




ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ
Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻ ԵՎ Ս. ՀՈՒՓՍԻՄԵՒ ՏԱՃԱՐԻ
ՊԵՂՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ս. Էջմիածնի Մայր Տաճարի Ավագ Սեղանի վերակառուցման, ինչպես և Ս. Հոփսիմեի վանքի վերանորոգման առթիվ Հայաստանի Գիտությունների ակադեմիայի կողմից Ս. Սեղանի տակ և Ս. Հոփսիմեի վանքում կատարվող պեղումները ներկայիս լրիվ ավարտված են:

Սույն թվականի հունիսի 10-ին Մայր Աթոռում հրավիրված հնագետների և նարտարապետների հանձնաժողովը, տեղում ֆենելով պեղման արդյունքները, այլև պեղման աշխատանքները ղեկավարող նարտարապետ Ալ. Սահինյանի զեկուցումը, լրացուցիչ կերպով հաստատեց՝

1. Ե դարում Վահան Մամիկոնյանի կողմից կառուցված Ավագ Սեղանի կենտրոնում հայտնաբերվեց թոնրածև մի կրակարան, մեջը մոխիր: Հատկապես նրա կողքին, որ Ե դարի վեմարը դրված է եղել ուղիղ կրակարանի վրա, որպեսի հանգամանք, հավանաբար, հանդիսացել է հեթանոսական պաշտամունքի նկատմամբ ֆրիստոնեական կրոնի հաղթանակի խորհրդանշումը:

Պեղումների արդյունքների հետագա առավել հանգամանորեն մշակման ընթացքում կարգվի, թե երբ է կառուցվել հիշյալ կրակարանը, ֆրիստոնեությունը պետական կրոն հռչակվելուց առաջ, թե Ե դարի կեսերին, պարսկական կրոնը բռնի կերպով Հայաստանում մտցնելու փորձերի ժամանակ:

Վեհափառ Հայրապետի քարեհան համաձայնությամբ որոշվեց կրակարանը, Ե դարի Ս. Սեղանի ամբողջ կառուցվածքի հետ միասին, պահպանել ընդհանուր դիտման համար, իբրև պատմական հուշարձան:

2. Ս. Հոփսիմեի տաճարի նորոգման առթիվ Գիտությունների ակադեմիայի կողմից տաճարի ներսում կատարված մասնակի պեղումները պարզեցին հետևյալը.

ա) Կոմիտաս կաթողիկոսի կողմից 618 թվականին կառուցված տաճարի գմբեթակիր ռոմանություններից երեքի տակ հայտնաբերվեցին առավել հնագույն

շենքի զարդաֆանդակված ֆիվի բեկորները ($130 \times 80 \times 32$ սմ.), որոնք հար և նման են Գառնիի հեքանոսական տանարի (Ա դար) համանման մանրամասների մշակմանը և, անկասկած, պատկանել են հեքանոսական (հելլենիստական) շրջանում ստեղծված մի խոշորագույն (հավանաբար պաշտամունքային) շենքի, որը գտնվելիս է եղել Ս. Հոփսիմեի տանարի շրջապատում:

Այսպիսով Ս. Հոփսիմեի տանարում հայտնաբերված այդ ֆարերը, Գառնի ամրոցի նարտարապետական նշանավոր հուշարձաններից հետո, Հայաստանի հելլենիստական շրջանի նարտարապետության մի նոր օճախի գոյության իրեղեն վկայություններն են:

բ) Տանարի այժմյան հատակից 40 սմ. ցած հայտնաբերվեց շենքի սկզբնական հատակը:

գ) Հայտնաբերվեց Ս. Հոփսիմե կույսի դամբարանի սկզբնական մուտքի ֆարաշեն աստիճանը, որը դամբարանի հետ մեկտեղ, ամենայն հավանականությամբ, հանդիսանում է Ս. Գրիգոր Լուսավորչի ժամանակաշրջանի (301 թ.) գործ:

Վեհափառ Հայրապետի բարեհաճ համաձայնությամբ, որոշվեց, ինչպես հեքանոսական շրջանի նարտարապետական բեկորները, այնպես էլ Ս. Հոփսիմե կույսի դամբարանի սկզբնական մուտքի աստիճանը առնել ապակեպատ հատուկ հարմարանքի տակ:

ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՈՒՐԴ

12 հունիսի 1959 թ.

Ս. ԷԶՄԻԱՄԻՆ

